

**ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ
ՀԱՎԱՔԱԾՈՒՆ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.71

Ամփոփում

Սույն հոդվածը վերաբերում է Արևմտյան Հայաստանի Մշո գավառից գաղթած և Վարդաձոր գյուղում հանգրվանած Գրիգորյանների ընտանիքին պատկանող մասնավոր ձեռագիր և տպագիր հավաքածուին: Շուրջ հինգ միավորից բաղկացած սույն հավաքածուն ներառում է՝ 2 ձեռագիր Հմայիլներ (16-17-րդ դ.), 1 հնատիպ Ավետարան (1685-1686 թթ., Վենետիկ), 1 տպագիր Ձայնքաղ Շարական (1852 թ., Կ. Պոլիս), 1 տպագիր Ժամագիր (1872 թ., Կ. Պոլիս), որոնց մանրամասնորեն անդրադարձել ենք նշված աշխատանքում: Սկզբնական շրջանում հավաքածուն ավելի մեծ է եղել, սակայն մի մասը 1995 թ. հրո ճարակ է դարձել: Նևսկի Գրիգորյանի մասնավոր հավաքածուի մեջ առկա միավորներն արժանի են ուսումնասիրման և հրապարակման, քանի որ բացահայտում են ձեռագիր Հմայիլների անհայտ օրինակներ, իսկ շնորհիվ հայտնաբերված նմանօրինակ տպագիր միավորների՝ հայ գրքարվեստը համալրում ու հարստացնում են ևս մի քանիսով:

Բանալի բառեր և արտահայտություններ. Վարդաձոր գյուղ, Արևմտյան Հայաստան, Մշո գավառ, նորահայտ, ձեռագիր Հմայիլներ, հնատիպ Ավետարան, տպագրեր, Շարական, Ժամագիրք:

Ներածություն

Հայ միջնադարյան մատենագրության էջերում ամբարվել է մեր դարավոր պատմությունն ու մշակույթը, որը բազում դժվարությունների միջով անցնելուց հետո հասել է մեզ: Այդ մշակութային ժառանգության անքակտելի մասն են ձեռագիր և տպագիր հավաքածուները, որոնք հիմնականում Ավետարաններ, Ժամագրքեր, Շարակնոցներ, Մաշտոցներ, Հմայիլներ և համանման այլ բովանդակության գրքեր են: Սույն հետազոտության խնդրո առարկան այդօրինակ մի հավաքածուի լուսաբանումն է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր (9) գյուղը մինչև 1968 թ. կոչվել է Ադամխան (2) որն առավել հայտնի է Դեմեր բլրից գտնված սեպագիր արձանագրությամբ, համաձայն որի գյուղի տարածքը դեռ ուրարտական

ժամանակներից եղել է թագավորական քաղաք (3), (15)¹: Գյուղը հայտնի է նաև միջնադարյան հուշարձաններով, որոնցից ամենահայտնին Սուրբ Աստվածածին (15) (7) (4) (3)² եկեղեցին է, որը, ըստ բնակիչների, կառուցվել է ավելի վաղ՝ 6-րդ դարի եկեղեցու հիմքերի վրա, նաև խաչքարային և տապանաքարային հուշարձաններով, Արևմտյան Հայաստանից բերված ձեռագիր և տպագիր հավաքածուներով:

Վարդաձոր գյուղը գլխավորապես բնակեցված է 1828-1830 թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ և Սշո գավառներից եկած գաղթականներով: Ունեցել է վերաբնակեցման երկու շրջան՝ առաջինը՝ 1829-1830-ական թթ., երկրորդը՝ 1877-1878 թթ.: 1829-1830-ական թթ. տեղահանության շրջանում գյուղում բնակություն է հաստատել 28 ընտանիք. 169 շունչ 101 արական և 68 իգական (17) (7)³ (սակայն հայտնի չէ, թե քանի ընտանիք է վերաբնակեցվել 1877-1878 թթ. գաղթի ընթացքում): Այս ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանից գաղթած ընտանիքներն իրենց հետ Վարդաձոր են տեղափոխել ձեռագիր և տպագիր օրինակներ՝ Ավետարաններ, Ժամագրքեր, Հմայիլներ, Շարակնոցներ և այլն (3):

Մեթոդաբանությունը

Հոդվածի առանցքը Գրիգորյաններին պատկանող նորահայտ հավաքածուի քննությունն է: Նշված հավաքածուի ուսումնասիրության համար կիրառել ենք կենսագրական, պատմահամեմատական, նկարագրական մեթոդները:

Քննարկում

¹ Մեպագիր արձանագրությունը ներկայումս գտնվում է Թբիլիսիի պետական թանգարանում. Тбилиси, ул. Кецховели-10, Гос. Музей Грузии:

² Եկեղեցին առավել հայտնի է Գյուղի ժամ կամ Կարմիր ժամ անունով, գտնվում է գյուղի կենտրոնում և 1998-2000 թթ. հիմնականում Եկեղեցու և նրա շրջակայքում պահպանվել են խաչքարային և տապանաքարային արձանագրություններ, որոնց մասին (շուրջ 18 արձանագրություն, որից միայն երկուսն են նախկինում հրատարակված եղել) տեղեկություններ կարող ենք քաղել Մ. Սմբատյանցի, Ե. Լալայանի, Ս. Բարխուդարյան Վ. Ավետիսյանի աշխատանքներից:

³ Համաձայն Ի. Շոպենի վիճակագրության՝ Վարդաձորում հաստատված ընտանիքների թիվը 28-ն են եղել, ընդհանուր՝ 169 շունչ. 101-ը՝ տղամարդ, 68-ը՝ կանայք, իսկ Ե. Լալայանը հայտնում է՝ Ալաշկերտի գյուղերից Վարդաձոր գյուղում բնակություն են հաստատում 147 տուն, 612 ար., 597 իգ., միասին՝ 1209: Իհարկե, բնակչության թիվը ժամանակի ընթացքում աճել է, որի արդյունքում 1939 թվին՝ եղել է՝ 1750 մարդ, 1959 թվին՝ 1404, 1970 թվին՝ 1999, 1979 թվին՝ 2404, 1989 թվին՝ 2277 բնակիչ, իսկ 2011 թվականի վիճակագրական տվյալների համաձայն՝ հասել 2864-ի:

Սույն մասնավոր հավաքածուն Վարդաձոր գյուղի բնակիչ Նսակի Գրիգորյանինն է: Հավաքածուն մինչ այդ գտնվել է եղբոր Խաժակ Հովհաննիսյանի ընտանիքի վերահսկողության ներքո: Նսակի Գրիգորյանի նախապապը՝ Կանչոն, 1828-1830-ական թթ. Մշո գավառից Վարդաձոր հանգրվանած գաղթականներից մեկն էր: Ճարահատյալ լքելով հայրենի բնակավայրը՝ ընտանիքի անդամների հետ տեղափոխվել է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատել Վարդաձորում՝ իր հետ վերցնելով նաև սեփական հավաքածուն: Կանչոն ունեցել է երկու որդի՝ Հովհաննես, Գրիգոր: Գրիգորը եղել է հոգևորական՝ քահանա, որին և փոխանցվել է ձեռագրերից ու տպագրերից բաղկացած հավաքածուն: Երկար տարիներ քահանայությամբ զբաղվելով գյուղում՝ տեղ Գրիգորն ավելի ուշ հավաքածուն ժառանգել է որդիներին՝ Ալեքսանին և Գրիգորին: Ժառանգականության ընդունված կարգի համաձայն հավաքածուն փոխանցվել է կրտսեր որդուն՝ Գրիգորին, որը, ունենալով չորս զավակ (ղուստր՝ Անուշ, որդիներ՝ Ոսկան, Գևորգ, Հովասափ), ժողովածուն փոխանցել է ավագ որդուն՝ Ոսկանին: Ոսկանն իր հերթին հավաքածուն ժառանգել է որդիներին՝ Պարույրին, Խաժակին, Արթուրին, Նսակուն (եղբայրներից Խաժակը և Արթուրը վերցրել են Հովհաննիսյան ազգանունը, իսկ Պարույրը և Նսակին՝ Գրիգորյան): Այժմ մասնավոր հավաքածուն գտնվում է Ոսկանի կրտսեր որդու՝ Նսակի Գրիգորյանի ընտանիքի անմիջական պահպանության ներքո:

Ի սկզբանե հավաքածուն ավելի մեծաքանակ է եղել և շատ տարիներ գտնվել Ս. Աստվածածին (Կարմիր ժամ) եկեղեցում, որը, նախքան վերակառուցումը (1998 թ.), եղել է անմխիթար վիճակում, ուստի խուսափելով ժողովածուի հետագա կորստից՝ հայրը՝ Ոսկանը, հավաքածուն վերադարձրել է տուն⁴: Երկար ժամանակ հավաքածուն գտնվել է Խաժակ Հովհաննիսյանի տան ներքնահարկում՝ սրբատեղի համարվող վայրում, որտեղ հաճախ ուխտի են եկել հավատացյալները: Համաձայն Գոհար Աբրահամյանի (Գոմեղին Հովհաննիսյանի կինը) հայտնած տեղեկության՝ Նսակի Գրիգորյանի ավագ եղբոր՝ Պարույր Գրիգորյանի և իր որդու՝ Վալերի Գրիգորյանի ջանքերով 1998թ. տան հարակից մասում կառուցվել է Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին, որը

⁴ Ներկայումս Ս. Աստվածածին (Գյուղի ժամ) եկեղեցու խորանում գտնվում է երեք տպագիր գիրք: Չենք կարող բացատրել, որ տպագրերից երկուսը՝ 1839-1840 թ. Ճաշոց գիրքը և 1862 թ. Ժամագիրքը նույնպես այս հավաքածուի մաս հանդիսանան, քանի որ հայտնի չէ ինչ եղանակով են հայտնվել եկեղեցում:

բնակիչների կողմից առավել հայտնի է «Գրիգոր Նարեկ»⁵ անվամբ: Եկեղեցու կառուցման ժամանակն ու տեղի ընտրությունը պայմանավորված են եղել այն հանգամանքով, որ Պարույր Գրիգորյանին Սուրբը երագում եկել է և դժգոհել իրեն ներքնահարկում պահելու համար, ապա մատնանշել ներկայիս եկեղեցու կառուցման վայրը:

Այսօր եկեղեցում պահվող հավաքածուն ընդգրկում է հինգ միավոր գրականություն՝ երկու ձեռագիր Հմայիլ (ԺԶ-ԺԷ դդ.), մեկ հնատիպ Ավետարան (1685-1686 թթ.), մեկ տպագիր Ձայնքաղ Շարակնոց (1852 թ.), մեկ տպագիր Ժամագիրք (1872 թ.): Հավաքածուում տեղ գտած միավորների քանակը կրճատվել է 1965 թ. հրդեհի հետևանքով, երբ Նևսկի Գրիգորյանի տան առաջին՝ նկուղային հարկում գտնված ժամանակ ուխտի եկած հավատացյալի մոմավառության ընթացքում պատահաբար հրդեհվել է տարածքը՝ այրելով որոշ հմայիլներ և տպագրեր:

Հավաքածուի միավորներից տարեթվով ամենահինը ձեռագիր Հմայիլներն են: Հմայիլները առհասարակ հին ծագում ունեն: Ինչպես նշում է հայ անվանի լեզվաբան Ստեփան Մալխասյանը, բառի ծագումը կապվում է պահլավերեն *humav*՝ օրհնեալ բառի հետ: Աղոթած՝ կախարդական աղոթքներով պատրաստված մի առարկա, որը կրողին պահպանում է այլևայլ փորձանքներից, յուրույթ, կախարդություն (12), այսինքն՝ «Հմայիլն աղոթքների, աղերսների, մաղթանքների ժողովածու է, որն ունի պահպանիչ-բուժիչ նշանակություն» (11):

«Փաթեթը կամ գալարը հմայագրերի ժողովածուների համար հնագույն ձև է և իր արմատներով հարել է մոզական փորձին, երբ ընդունված էր, որ այդ ձևով փաթաթված աղոթքը կամ անեծքը արտաքին անբարենպաստ ազդեցությունների չի ենթարկվում և դրանով մեծ ուժ է ձեռք բերում (գալարածն Հմայիլներից գատ, կան նաև գրքածն, եզակի օրինակ հանդիսացող Հմայիլներ: Գրքածն հմայիլները ավելի ուշ շրջանի են)» (11):

Հմայիլները բազմաբովանդակ աղոթքների ժողովածուներ են: Դրանք կարող են ընդգրկել համաքրիստոնեական տարբեր սրբերին, կրոնական այրերին նվիրված աղոթք-խնդրանքներ (ս. Գևորգ, ս. Սարգիս, ս. Ստեփաննոս Նախավկա, ս. Հովհաննես Մկրտիչ, ս. Գրիգոր Լուսավորիչ և

⁵ Եկեղեցու անվան ընտրությունը պայմանավորված է նրանով, որ հավաքածուում, ըստ ընտանիքի անդամների հաղորդած տեղեկության, տեղ է գտել Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններից մեկը, որը հետագայում անհետացել է: Ներկա ուսումնասիրության ընթացքում Գրիգոր Նարեկացուն առնչվող որևէ միավոր չի հայտնաբերվել, հերևաբար չենք կարող նշել գրքի բնույթն ու բովանդակությունը:

այլն), զանազան հիվանդություններից, դժբախտություններից և փորձություններից ազատվելու, ընդհուպ աստվածային պաշպանություն և հովանավորություն ստանալու համար հղված մաղթանքներ: Աղոթքների զորությունն ամրապնդելու և ազդեցությունն առավել ուժեղացնելու, հրաշագործ հատկություն հաղորդելու նպատակով դրանք զարդարում էին աղոթքին բնորոշ ոճական բազմազանությամբ՝ առանձնացող մանրանկարներով և պատկերագրությամբ, որոնք հաճախ Հմայիլներին բացառիկ արժեք էին հաղորդում: Սովորաբար այդ նկարագարողումները նախորդում են համապատասխան աղոթքներին: Իսկ աղոթքների քանակը մեկ Հմայիլում կարող է ընդգրկել մինչև 70 և ավելի միավոր (հայտնի է ամենաերկար Հմայիլը ներառում է մոտ 72 աղոթք)⁶:

1. Ձեռագիր Հմայիլ: Հմայիլը թվագրվում է ԺԶ. դարով՝ ըստ գրության և տառաձևերի: Կազմված է 2 թղթյա կտորներից՝ միաձուլված այնքան հմտությամբ և վարպետորեն, որ գրեթե աննշմարելի է միաձուլված հատվածի սահմանաբաժանումը: Միասյուն գրություն, որը երկու կողմերից սահմանագծված է զույգ կարմիր եզրագոտով՝ 77,7x7,4 սմ մեծությամբ: Բովանդակությունը շարադրված է կանոնիկ բոլորգրով (1)⁷, իսկ հետագա հիշատակարանի հատվածները՝ նոտրգրով: Խորագրերը և գլխագրերը գրված են կարմիրով, իսկ շարադրանքի մնացյալ մասի համար գործածված է սև թանաք: Հմայիլի ներկայիս վիճակը կարելի է գնահատել բավարար: Լուսանցակողերը մասամբ մաշված են, որի հետևանքով եզրերում առկա են մանր պատռվածքներ: Գրադաշտին նկատելի են որոշ կեղտաբծեր, յուղի հետքեր, երևում են ծավալածքից մնացած գծերը: Ձեռագիրը սկզբից և վերջից պակասավոր է: Ներկա վիճակի քննությունը հնարավորություն է տալիս արձանագրելու Հմայիլի նախկին ավելի մեծ չափեր ունենալը: Չի բացառվում, որ պատռված-ընկած մասում եղել են կրոնական թեմաներ ընդգրկող մանրանկարներ, տերունական պատկերներ, զարդագրեր, ճակատագարդեր և այլն: Հմայիլը բովանդակում է 5 ամբողջական բնագիր ունեցող աղոթք-խնդրանք՝ «Աղոթք», «Գիր քաղցրության ամենայն նորոգողի մասին», «Հովհաննես Մկրտչի աղոթք», «Աղոթք և կապեր չար լեզվից և չար աչքից», «Չար գազանի և կարիճի, գողի և օձի և մորեխի աղոթք»: Աղոթքներից յուրաքանչյուրն իր հերթին ավարտվում է հետագա

⁶ Տեղեկությունը մեզ հայտնել և համապատասխան գրականությունը տրամադրել է Մատենադարանի ավագ գիտաշխատող, ձեռագրատան ավանդապահ, ա. գ. թ. Դավիթ Ղազարյանը, ում հայտնում ենք խորին շնորհակալություն:

⁷ Բոլորգիրը հայկական գրատեսակ է, որը կիրառելի է եղել հիմնականում 12-16-րդ դդ.:

հիշատակարանով (10)⁸՝ «Զաքարին, իւր կողագցին (իմա՝ իր կողակցին)՝ Սոթանա[ղին]»:

2. *Ձեռագիր Հմայիլ*: Այն 355,2x6,5 սմ մեծության է: Բաղկացած՝ իրար սոսնձված միջին չափի թղթե կտորներից, որոնք միաձուլված են նույնքան արհեստավարժ, որքան նախորդ ձեռագիրը: Այն միայն սկզբում ունի պակասավոր հատված, բովանդակությունը, բացառությամբ սկզբի, ամբողջական է: Ձեռագիրը լավ վիճակում է, տեղ-տեղ տեսանելի են կեղտաբծեր՝ եզրերում այրվածքի հետքերով, որոշ մասերում նկատելի են քերծվածքներ: Գրադաշտի մի որոշ հատված զգալիորեն մաշված է, որի հետևանքով վնասվել է բնագրի մի փոքր մաս: Բովանդակությունն ամբողջությամբ շարադրված է 17-րդ դարի նոտրգրով (1)⁹: Կարմիր թանաքով են գրված խորագրերը և գլխատառերը, իսկ բնագրի մնացյալ մասն ամբողջությամբ՝ սև թանաքով: Գրադաշտն ու նկարազարդումները երկու կողմից եզերված են կրկնակի կարմիր եզրագոտով:

Հմայիլը բովանդակում է թվով 14 աղոթք՝ «Աղոթք», «Այլ գիր դատավորներին և չար կամեցողներին», «Դատիք նրանց, Տե՛ր, ովքեր դատում են ինձ», «Խնդրանք պահպանության չարից¹⁰», «Գիր չար աչքի, չար նիաթի և նազարի», «Այլ գիր չար նիաթի», «Ղուլնջի և գախորի և փորագավի աղոթք», «Նուզլայի աղոթք», «Այլ ևլիսամ և գիր քաղցրության և

⁸ Ձեռագրերում և տպագրերում ևս գրչի կամ ձեռագրի ավարտման հիշատակարաններից բացի կան նաև հետագայում գրված հիշատակարաններ: Իրենց գոյության ընթացքում դրանք անցնում են ժամանակի միջով և ենթարկվում պատեհ և անպատեհ փոփոխությունների. նորոգվում կամ լրացվում են, գերվում կամ փրկագնվում և այլն: Այս գործողությունները հաճախ իրենց գրավոր արտացոլումն են գտնում ձեռագրի ազատ էջերում, լուսանցներում կամ մուծված թերթերի վրա: Սրանք ձեռագրի կամ տպագրի հետագա հիշատակարաններն են: Եթե նախորդ հիշատակարանները ձեռագրի ստեղծմանը և ստեղծողներին էին վերաբերում և գրվում գերազանցապես գրչի, ստացողի կամ մասնակիցներից որևէ մեկի ձեռքով, ապա հետագա հիշատակարանները վերաբերում են դրանց գոյատևմանը, նորոգողներին, փրկողներին, պահպանողներին և ներկայացնում տարբեր ժամանակներ ու վայրեր:

⁹ Նոտրգիրը հայկական գրատեսակներից մեկն է, որը որպես գրի իշխող տեսակ հանդես է եկել 17-18-րդ դդ., իսկ 19-րդ դարում իր դիրքերը զիջել է մեկ այլ գրատեսակի՝ շղագրին: Նոտար բառը ծագում է լատինական *notarius* բառից, որն ունի «գրագիր», «դպիր» իմաստը, իսկ նոտրգիր՝ «գրագիրների», «դպիրների» գիր: Այն համարվում է արագագիր գրություն, որի նպատակն է, որքան կարելի է արագ գրել և քիչ տարածության վրա շատ տառեր տեղավորել:

¹⁰ Աղոթքի խորագիրը ընդհանրական է տրված, քանի որ գունաներկի թափվածության հետևանքով նշմարելի են կցկտուր բառեր:

երեսֆախտության», «Գիր և աղոթք ճանապարհի, որ փրկի ամենայն չարից», «Աղոթք առ տիրամայր Աստվածածին՝ ամեն տեսակ խնդիրների համար», «Պահապան Երուսաղեմի», «Տասներկու առաքյալների աղոթք», «Ներսես Շնորհալու աղոթք»:

Աղոթքների մի մասին նախորդում են գրչի ձեռքով արված ութ մանրանկարներ՝ Մատթեոս ավետարանիչ՝ «Սուրբ Մատթեոս» մակագրությամբ, Մարկոս ավետարանիչ՝ «Սուրբ Մարկոս» մակագրությամբ, Դուկաս ավետարանիչ՝ «Սուրբ Դուկաս» մակագրությամբ, Հովհաննես ավետարանիչ՝ «Սուրբ Յոհաննես» մակագրությամբ, Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին, Հիսուս Քրիստոսը՝ «Տեր Աստուած՝ Յիսուս Քրիստոս» մակագրությամբ, Տասներկու առաքյալներ, Ներսես Շնորհալի՝ «Ներսես հայրապետ» մակագրությամբ, ինչպես նաև մեկ ճակատագարդ:

Սույն Հմայիլները լավագույնս բնութագրում են տվյալ ժամանակաշրջանի ժողովրդական ընկալումները և պատկերացումները:

3. Հնատիպ Ավետարան: 16-րդ դարում համաշխարհային գրքի պատմության մեջ տեղի ունեցավ կարևորագույն իրադարձություններից մեկը՝ տպագիր գրքի գյուտը: Այս նշանակալի իրողությամբ էլ հիմք դրվեց տպագիր գրքի ստեղծմանը՝ աշխարհի տարբեր մասերում, այդ թվում նաև Հայաստանում: Պայմանավորված Հայաստանի աշխարհաքաղաքական ծանր դրությամբ՝ հայ տպագիր գիրքը ստեղծվեց օտար միջավայրում, հիմնականում այն վայրերում, որտեղ գործում էին հայկական գաղթօջախներ: Դրանց թվում առաջնային տեղ էին զբաղեցնում Բուլաիան, Ամստերդամը, Կ. Պոլիսը և այլն: Սկսած 1512-1800 թթ., որը համարվում է հնատիպ գրքի զարգացման շրջանը, ստեղծվել և երևան են եկել հայալեզու տպագիր գրքեր, որոնք բովանդակել են հիմնականում կրոնական բնույթի ստեղծագործություններ: Այդ գրքերի շարքում առանցքային տեղ են զբաղեցնում Ավետարանները, Սաղմոսարանները, Ժամագրքերը, Մաշտոցները, Շարակնոցները և այլն: Նմանատիպ մեկ Ավետարան ներառված է սույն հավաքածուում: Հայերեն հնատիպ Ավետարանը տպագրվել է Վենետիկում: Միքելանջելո Բարբոնիի (8)¹¹ տպարանում լույս

¹¹ Այստեղ գրքի տպագրության թվականը սխալմամբ նշել է 1684 (էջ 92): Մ. Բարբոնին հատուկ ուշադրություն է դարձնում հայ գրքերի հրատարակությանը. բազմացնում է տառատեսակները, պատրաստել տալիս գլխագրեր և զարդագրեր, իսկ 1678 թ. սկսում է տպագրել հայերեն գրքեր: Նրա տպարանում լույս են տեսել հայերեն Ավետարաններ, Ժամագրքեր, Սաղմոսներ, Ստեփան Լեհացու «Բուրաստան աղօթից» թարգմանությունը, «Նորագույն ծաղիկ», «Գիրք Տոմարաց» և այլ աշխատություններ:

տեսած հայկական բազմապիսի գրքերից մեկն է՝ 1685-1686 թթ.: Այս հնատիպ օրինակը 18x13,5 սմ մեծության է, բաղկացած՝ 450 էջից: Թղթյա էջերում նշմարելի են լուսագծերն ու լուսադրոշմները՝ երեքնուկով պսակված գծային խաչ, որի աջ կողմում՝ «G», անընկալելի պատկեր: Շարադրանքը բոլորգորով է, գրությունը՝ երկայուն շարվածքի մեջ՝ 12,4x9,2 սմ: Կազմը մուգ շագանակագույն կաշի է աջ կողմին դնակ: Կազմի Ա. փեղկին պահպանվել է մետաղյա շրջանակից որոշ հատված, որի կենտրոնում խաչելության տեսարանն է, թևերին՝ ազուցված ավետարանիչների դեմքերը, մետաղյա շրջանակի աջ և ձախ մասերն ավարտվում են՝ «Յիշատակ է սուրբ Խաչս 1876» մակագրությամբ: Միջուկը փայտից է, աստառը՝ կարմիր կտոր, իսկ լուսանցակողերն ընդգծված կարմիր ներկանյութով: Բնագիրն ունի արաբական և հայկական գուգահեռ էջակալություն: Քառածալ է, մամուլանիշերը՝ հայատառ և լատինատառ: Էջախորագրերով է, լուսանցքներում և տողատակերում կան համաբարբառային նշումներ: Ունի 4 փորագիր պատկեր, գլխագարդեր, լուսանցագարդեր, վերջնագարդեր, զարդագրեր, կենդանագրեր: Տպագրից օրինակներ կան այլ հաստատություններում ևս, ինչպես՝ Հանրային գրադարանում, ՄՄ անվան Մատենադարանում և այլն (13):

4. *Տպագիր Ձայնքաղ Շարական* (6)¹²: 1852թ. Կ. Պոլիսում տպագրված գիրքը երևան է եկել անվանի տպագրիչ Պողոս Արապյանի (8)¹³ կողմից իր իսկ հիմնադրած Պողոս Արապյան Ապուշեխցու հայկական տպարանում: Այն բաղկացած է 572 էջից: 32,5x23,3 սմ մեծության է, ամբողջությամբ տպագրված բոլորգորով, ունի 26x17 սմ երկայուն շարվածք, որը բոլոր կողմերից առնված է կրկնակի եզրագոտու մեջ, անկյուններն ավարտվում են

¹² Շարակնոցը [շարականների](#) ժողովածու է: Բովանդակում է եկեղեցում աստվածապաշտության ժամանակ երգվող հոգևոր երգեր: Շարականները ստեղծվել են եկեղեցական տարբեր տոներին՝ Տերունական օրերին, սրբերի հիշատակին, պահքի օրերին երգելու համար: Դրանցում զետեղված երգերի մի մասը դասավորված են ըստ ձայնեղանակների և կոչվում են «Ձայնքաղ Շարականներ»: «Ձայնքաղ» նշանակում է զանազան ձայներից քաղված յուրաքանչյուր տոնի օրը երգելիք շարականները պարունակող:

¹³ Պողոս Արապյանը եղել է իր ժամանակի լավագույն տպագրիչ-հրատարակիչը, փորագրիչ, գրաձուլիչ և նորատեսակ տառերի հնարողներից մեկը, որն իր 70-ամյա գործնեության շրջանում ունեցել է բազմաթիվ տպարաններ, որոնց համբավը տարածվել է Վրաստանում, Թուրքիայում և այլուր: Պ. Արապյանի (Կ. Պոլսում) տպարանական գործունեությունը բաժանվում է երկու շրջանի. 1) 1790-ական թթ.-ից մինչև 1819 թ. տպարան Պողոս Հովհաննիսյանի, Քյուրքչիխան, 2) 1820 թվից մինչև 1835 թիվը երկու տպարան Քյուրքչիխանում՝ որդիների անունով, և իր նոր տպարանը Պողոս Արապյան Ապուշեխցի անվանումը ստացած՝ Օրթագյուղում:

գարդանախաշերով, իսկ տիտղոսաթերթը՝ նախազարդ շրջանակով: Տպագիրն էջախորագրերով է, լուսանցներում առկա են համաբարբառային նշումներ: Տպագրական տվյալներից առաջ դրոշմված է Պողոս Արապյանի տպարանի նշանը: Տպագիրը ներառում է աստվածաշնչյան բնույթի տասնմեկ պատկեր, ճակատագարդեր, գլխազարդ, վերջնազարդեր: Կազմը շագանակագույն կաշվից է, որը արտաքինից դրոշմազարդ է, միջուկը սովորաթղթից է, իսկ աստառը՝ թղթյա: Սույն տպագիրն ունի պակասավոր էջեր. 1-8, 15-16 և մեջքի բացակայության հետևանքով հիմքից պոկված թերթեր. 19-32, 45, 57-64: Այս տպագրի օրինակից պահպանվում է Հանրային գրադարանում (14): Ըստ Նսևկի Գրիգորյանի՝ Չայնքաղ Շարակնոցն այժմ պահվում է գյուղի կենտրոնում գտնվող Ս. Աստվածածին (Կարմիր ժամ) եկեղեցում: Եկեղեցու օծման և վերաբացման ժամանակ (2000թ.) այնտեղ է տեղափոխվել ևս երկու այլ տպագրերի հետ միասին դրվել խորանում¹⁴:

5. *Տպագիր Ժամագիրք* (5)¹⁵: Սույն Ժամագիրքը Կ. Պոլսի Հովսեփ Գավաֆյանի (8)¹⁶ իր իսկ անվան հայկական տպարանում տպագրված բազմաթիվ գրքերից մեկն է՝ 1872 թ.: Շուրջ 650 էջից բաղկացած տպագիրը՝ 18,4x11,5 սմ մեծության է: Տպագրանկյունը թուղթ է, որն ունի լուսագծեր և լուսադրոշմ՝ անընկալելի: Գրությունը՝ 14,5x8,5 սմ միասյուն շարվածքով, բնագիրը շարադրված է բոլորգրով: Տպագիր գրքի կազմը շագանակագույն

¹⁴ Վերոնշյալ Չայնքաղ Շարակնոցից գատ, Ս. Աստվածածին եկեղեցու խորանում է գտնվում 1839թ. Ս. Էջմիածնում տպագրված ճաշոց գիրքն ու 1862 թ. Վաղարշապատում տպագրված Ժամագիրքը: Նշված տպագրերը մեր ուսումնասիրության առանցքում են, որոնց անդրադառնալու ենք «Վաղարշապատ գյուղի ձեռագիր և տպագիր ժառանգությունը» գրքի շրջանակում:

¹⁵ Ժամագիրքը մեկ այլ իմաստով՝ Աղոթամատույցը, Աղոթագիրքը քրիստոնեական ծիսական հնագույն գրքերից է, որը բովանդակում է եկեղեցական տոների և արարողակարգի պատշաճեցված աղոթքներ, հոգևոր երգեր, քարոզներ: Այն հնում ծառայել է նաև որպես դասագիրք: Որպես կանոն, կազմավորվել և կարգավորվել է գրերի գյուտից հետո՝ թարգմանական շրջանում, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց ավագ աշակերտների կողմից: Ժամագիրքը վերջնական խմբագրվել և այսօրվա տեսքին է բերել պատմիչ, մանկավարժ, եկեղեցական և մշակութային գործիչ Թովմա Մեծփեցին 1432 թվականին: Իսկ առաջին տպագրությունը կատարել է Աբգար Դպիրը (1568 թ., Կ. Պոլիս), Մայր Ժամագիրքը՝ Խաչատուր Կեսարացին (1642 թ., Նոր Զուղա):

¹⁶ Հովսեփ Գավաֆյանը Կ. Պոլսում 1860թ. հիմնում է իր սեփական տպարանը: Երկու ընկերների հետ 1867 թվին ստեղծում է «Եղբարք գրավաճառության» գրախանությունը: Նրա տպագրած գրքերի թիվը (1863-1888 թթ.) հասնում է շուրջ 30-ի՝ չհաշված տարբեր դասագրքեր: Տպարանի գործունեության ողջ ընթացքում տպագրվել է մոտ 195 անուն գիրք:

կաշի է, որին ամրացված է եղել մետաղյա շրջանակ (ներկայումս՝ անջատ), կենտրոնում ծաղկաթև խաչ՝ «Խաչելություն» տեսարանով, թևերին՝ երեք կոստող, աջ կողմինը՝ ընկած: Միջուկը ստվարաթղթից է, աստառը՝ կանաչ մետաքսից, իսկ լուսանցակողերն ընդգծված են կարմիր ներկանյութով: Տպագիր օրինակից պահպանվում է Հանրային Գրադարանում (14):

Եզրակացություններ

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ երկար տարիներ ստվերում մնալուց հետո ձեռագրական և տպագրական հավաքածուն լուսաբանվեց առաջին անգամ: Խնդրո առարկա հավաքածուի ուսումնասիրությունը հնարավորություն ընձեռեց երևան բերելու և հետազոտելու բոլորովին անհայտ ձեռագրեր ու շրջանառության մեջ դնելու արդեն հայտնի տպագիր միավորներ, լրացնելու ձեռագիր Հմայիլների և տպագիր գրականության բազմաբովանդակ հավաքածուների շարքը՝ այդկերպ հասն դարձնելով ավելի լայն շրջանակներին:

ՁԵՌՍԱԳԻՐ ՀՄԱՅԻԼՆԵՐ

1

ԺՁ. դար

ՀԵՏԱԳԱ ՍՏԱՅՈՂ՝ Զաքար (17-րդ դ.):

ԹԵՐԹ՝ 1 (ժապավենաձև): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 15,5x7,4 սմ: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն, երկու կողմերից գույգ կարմրով սահմանագծված (15,3x7,4): ԳԻՐ՝ բոլորգիր: Խորագիր՝ կարմիր:

ՎԻՃԱԿ՝ բավարար: Սկիզբը և վերջը թափված, թերթերքը մաշված, որի հետևանքով մանր պատռվածքներ: Թերթերին՝ բծեր, կեղտաբծեր, այրավծքի հետքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. [Նարեկ, Բան ԽԱ.] – սկ. թափված /// զառի աղջամուղջն, վերանայ մութն, գնա գիշերն, տարագրի տագնապն... բարեխօսութիւն սուրբ Նարեկոյն պահեա՛ գծառայիս Աստուծոյ (հետագայի ձեռքով՝ «Զաքարին, իւր կողագցին՝ Սոթանաղին»):

Բ. Գիր վասն քաղցրութեան ամենայն մարդոյ – Սուրբ Սաթիեայ եւ Մաթիայի վերնատանն պատարագէին... Քրիստո՛ս Աստուած, քաղցրութեամբ արայ ի ծառայի Աստուծոյ (հետագայի ձեռքով՝ «Զաքարի[ն], իւր կողագցին՝ Սոթանաղին»):

Գ. [Աղօթք Յովհաննու Մկրտչին] – /// իլեաց /// [Յ]ովաննէս Մկրտիչի նմանէ եւ ասէ. Տէ՛ր, ետ ես զքեզ աչք իմ... Քրիստո՛ս Աստուած, որ խաչեցար

Աղամա[յ] գլխոյն վերա եւ արա՛ բժշկութիւն ի ծառայիս Աստուծոյ (հետագայի ձեռքով՝ «Ջաքարին, իւր կողագցին՝ Սոքթաղին»):

Դ. Աղաւթք եւ կապք չար լեզուի եւ չար աչից – Սուրբ Խաչն Աղթամարա[յ] եւ Սուրբ Նշան Վարագայ, քաղցր կաթն սուրբ Կուսին... կապեցէ՛ք եւ մշեցուցէ՛ք զամենայն չարկաց լեզու, զսիրտ, զմիտ եւ զամենայն զգա[յ]արանքի դիմաց ծառայիս Աստուծոյ (հետագայի ձեռքով՝ «Ջաքարին, կողագ[ց]ին՝ Սոքթաղին»):

Ե. [Աղթթք] չար գազանի եւ կարիճի, գողի եւ աւձի եւ մորմնի – Սուրբ Կապոս եւ սուրբ Կապտոկոս, եւ սուրբ Սաբատ... նոյնպէս կապեալ եղիցի ամենայն չար գազանի դէմ՝

ծառայիս Աստծոյ (հետագայի ձեռքով՝ «Ջաքարին»)... եւ ամենայն չարախօսաց բերանն ի դէմաց ծառայիս Աստուծոյ /// վջ. թափված:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

Տե՛ս Բովանդակություն՝ ամեն առանձին միավորի վերջը:

2

ԺԷ. դար

ՍՏԱՅՈՂ՝ Զիրաք:

ԹԵՐԹ՝ 1 (ժապավենաձև): ՆՅՈՒԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 355,2x6,5: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասյուն՝ մոտ՝ 405,2x6 սմ: ԳԻՐ՝ նոտրգիր:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ – Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, դեղին, մոխրագույն, նարնջի, շագանակագույն, սև:

ՎԻՃԱԿ՝ բավարար: Սկիզբը և վերջը՝ թափված: Լուսանցակողերը՝ մասամբ մաշված, որի հետևանքով՝ մանր պատռվածքներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՆԵՐ

Ա. [Աղթթք] – սկ. թափված ///տիի բարին կատարին եւ պարզերես մնացէ՛ ծառայն Աստուծոյ Զիրաքն. ամէն:

Բ. Այլ գիր դատաւորաց եւ ամենայն չարակամաց ազգի – Անուէլ, Սանուէլ եւ Եփեմիէլ... սիրտն ի քաղցրութիւն փոխեն դէմ ծառայիս Աստուծոյ՝ Զիրաքին... եւ ի քաղցրութիւն փոխարկին դէմ ծառայիս Աստուծոյ՝ Զիրաքին:

1. Մատթեոս ավետարանիչ՝ «Սուրբ Մաթեոս» մակագրությամբ:
2. Մարկոս ավետարանիչ՝ «Սուրբ Մարկոս» մակագրությամբ:
3. Ղուկաս ավետարանիչ՝ «Սուրբ Ղուկաս» մակագրությամբ:
4. Հովհաննես ավետարանիչ՝ «Սուրբ Յոհաննէս» մակագրությամբ:

Գ. [Աղթթք] – Ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ... Բարեխոսութեամբ ամենայն սրբոց: Ծնթ. Շարադրանքն առնված է վանդակազարդ ուղղանկյան մէջ:

Դ. Գիր չար աչի եւ չար նիաթի եւ նազարի զիմ ծառ՝ – Եղեալ երթայր չար աչքն ի չար ճանապարհին... եւ խաւար դառնայ դէմ ծառայիս Աստուծոյ (այլ ձեռքով՝ «Զիրաքին»):

Ե. Այլ գիր չար նիաթի – Գայր չար աչքն՝ հայելով, զի քարինքն հալէին... խափանեալ կայցցէ ամենայն չար աչքն, չար նիաթն ի ծառայէս Աստուծոյ՝ ի Զիրաքին. ամէն եղիցի:

Զ. Աղօթք դոլնջի եւ գիտրի (՞) եւ փորացաւի – Աթիայ, Աթասիայ, Աթլասիայ, կարի դօլինջն... եւ որպէս զհամբ, որ ոչ բանայ զբեր[ա]յն իւր:

5. Հմայագիր «Տլիսմ դատ անի Աստուծով» մակագրությամբ:

Է. Աղօթք նուզլայի – Հրամայեաց սուրբ առաքեալն Բարդուղիմէոս... զգայարան կապեմ դիմաց ծառայի Աստուծոյ՝ Զիրաքին:

Ը. Այլ ալիսմ եւ գիր քաղցրութեան եւ երեսփախտութեան – Ուրիէլ, Ուտիէլ, Պիպարիէլ, Այութայ, անութայ... ամենայն մար/// ծառայիս Աստուծով Զիր[աքին]///րոցն ամէնի:

Թ. Գիր եւ աղօթք ճանապարհի, որ յամենայն չարէ փրկի, ծառայն Աստուծոյ Զիրաքն – Կենդամէլ, Կենդանամէլ, Մաթէ, որք էք սպասաւորք Աստուծոյ... զի մի չար ինչ լինիցի ծառայիս Աստուծոյ. ամէն:

6. Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին:

Ժ. Աղօթք առ Տիրամայր Աստուածածին վասն ամենայն խնդրոյ – Ողջոյն ընդ քեզ, Մարիամ... եւ յաւուր նեղութեան եւ յաւուր դատաստանի մերոյ. ամէն:

1. Աշուն խաճան հալ ու ճայ... ծառայն Աստուծոյ Զիրաքն. ամէն եղիցի:

2. Ուրիէլ, Ուլիէլ, Պիրպարիէլ, Այութայ... պահապան քո, որպէս ոչ ննջէ եւ ոչ ի քուն:

Ծնթ. գրված խաչաձև բոլորշիների մեջ:

7. Ճակատագարդ

ԺԱ. Պահապանի՝ լի (=լինի) – Տէ՛ր, պահապան մեր, եւ Տէր ընկալցի աջոյ՝ ձեռամբն իւրով արեգական... սա ի պահպանութիւն ծառայս Աստուծոյ՝ Զիրաքին. ամէն:

ԺԲ. [Աղօթք Բարդուղիմէոս առաքեալի վասն ամենայն ցավոց] – Հրամայեաց սուրբ առաքեալն Բարդուղիմէոս... հալածեալ լիցի ծառայն Աստուծոյ Զիրաքին:

8. Հիսուս Քրիստոս «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս» մակագրությամբ:

9. ԺԲ. աշակերտներ

ԺԳ. [Աղօթք] – Անմահ գառինքն հգօրի, / Որ միշտ զինեալ եւ կենդանի... արժան առնէլ սրբոց դասուց. ամէն: Բարեխօսութեամբ սուրբ առաքելոցն, եղիցի պահապան ծառայիս Աստուծոյ՝ Զիրաքին:

10. Ներսէս Շնորհալի՝ «Նէրսէս հայրապետ» մակագրությամբ:

ԺԴ. Աղօթք սրբոյն Ներսէսի հայրապետին – *Հաւատով խոստովանիմ եւ երկիր պազանիմ քեզ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի... Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն՝ անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից, ամէն: Բարեխօսութեամբ սուրբ հայրապետին Նէրսէսի եղիցի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ, Ձիրաքին:*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ստացողի. տե՛ս Բովանդակություն՝ ամեն առանձին միավորի վերջը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա. (1973), Հայոց գիր և գրչություն, Երևան:
2. Ասլանյան Ա., Գրգեարյան Հ. (1981), Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Երևան:
3. Ավետիսյան Վ. (2008), Վարդաձոր, Երևան:
4. Դիվան հայ վիմագրության (1973), Պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ Բարխուդարյան Ս., Երևան:
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1972), հ. երկրորդ (Զ-Օ), Երևան:
6. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1974), հ. երրորդ (Կ-Մ), Երևան:
7. Լալայեան Ե. (1908), Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք. Տեղագրութիւն, Ազգագրական հանդէս, Տասնեւմկերորդ տարի, XVIII գիրք, հմր. 2, Թիֆլիս:
8. Լևոնյան Գ. (1958), Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան:
9. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. (1998), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4 (Ն-Վ), Երևան:
10. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ. (1988), աշխատ.՝ Մաթևոսյան Ա., Երևան:
11. Ղազարյան Դ. (2013), Ժապավենաձև հմայիլներ, Երևան:
12. Մալխասեանց Ս. (1944), Հայերեն բացատրական բառարան, հ. 3 (Հ-Ո), Երևան:
13. Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա. (1988), Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան:
14. Ոսկանյան Ն., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Գյուլումյան Օ., Սահակյան Ա., Թադևոսյան Ս. (1999), Հայ գիրքը 1851-1900 թվականներին, Երևան:

15. Մսրատյանց Մ. (1895), Տեղագիր Գեղարքունի Օովագարդ գաւառի, որ այժմ Լոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ:
16. Меликишвили Г. (1960), Урартские клинообразные надписи, Москва.
17. Шопен И. (1852), Исторический памятникъ состоянія Армянской-области въ эпоху ея присоединения къ Россійской-имперіи, Санкт-Петербург.

REFERENCES

1. Abrahamyan A. (1973), Hayoc gir & grchowt'yown /Armenian letter and writing/, Yerevan.
2. Aslanyan A. (1981), Haykakan SSH ashxarhagrakan anownneri hamar'ot bar'aran /Grgearyan H., A Brief dictionary of Geographical Names of the Armenian SSR/, Yerevan.
3. Avetisyan V. (2008), Vardad'or /Vardadzor/, Yerevan.
4. Corpus of Armenian epigraphy (1973), Practice IV, Gegharkowniq. Kamoyi, Martownow & Vardenisi shrjanner /Gegharkunik. Kamo, Martuni and Vardenis regions/, compiled by S. Barkhudaryan, Yerevan.
5. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran /Explanatory dictionary of the modern Armenian language/ (1972), vol. second (Z-Z), Yerevan.
6. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran /Explanatory dictionary of the modern Armenian language/ (1974), vol. third (K-M), Yerevan.
7. Lalayan E. (1908), Nor Bayaze'ti gawar' kam Gegharkowniq. Teghagrowt'iwn /New Bayazet province or Gegharkunik. Topography/, Ethnographic report, Eleventh year, XVIII book, № 2, Tiflis.
8. Levonyan G. (1958), The Armenian book and the art of printing, Yerevan.
9. Hakobyan T., Melik-Bakhshyan St., Barseghyan H. (1998), Hay girqy' & tpagrowt'yan arvesty' /Dictionary of place names of Armenia and adjacent regions/, vol. 4 (N-V), Yerevan.
10. Hayeren d'er'agreri hishatakaranner E-JhB dd. /Colophon of Armenian manuscripts E-ZB century/ (1988), work: A. Matevosyan, Yerevan.
11. Ghazaryan D. (2013), Jhapavenad'& hmayilner /Amulets in scroll/, Yerevan.
12. Malkhaseants S. (1944), Hayere'n bacatrakan bar'aran /Armenian explanatory dictionary/, vol. 3 (H-O), Yerevan.
13. Voskanyan N., Korkotyan K., Savalyan A. (1988), Hay girqy' 1512-1800 t'vakannerin /The Armenian book in 1512-1800 years/, Bibliography of the Armenian ancient book, Yerevan.

14. Voskanyan N., Savalyan A., Soghomonyan M., Gylumyan O., Sahakyan A., Tadevosyan S. (1999), *Hay girqy' 1851-1900 t'vakannerin /The Armenian Book in 1851-1900/, Yerevan.*
15. Smbatyants M. (1895), *Teghagir Gegharqowni C'ovazard gawar'i, or ayjhm Nor-Bayazit gawar' /Topography of Gegharkun Tsovazard province, now New-Bayazit province/, Vagharshapat.*
16. Melikishvili G. (1960), *Urartskiye klinoobraznyye nadpisi /Urartian cuneiform inscriptions/, Moscow.*
17. Chopin I. (1852), *Istoricheskiy pamyatnik" sostoyaniya Armyanskoy-oblasti v" epokhu yeye prisoyedineniya k" Rossiyskoy-imperii /Historical monument of the state of the Armenian region in the era of its accession to the Russian Empire/, Saint-Petersburg.*

Сатеник Григорян

Частная коллекция рукописи и печати семьи Григорянов

Заключенне

Ключевые слова и выражения: село Вардаздор, Западная Армения, провинция Мшо, новоявленные, рукописные амулеты в виде свитка, старопечатная Евангелия, напечатанные, Шаракан (церковное песнопение), Часословие.

Статья о частной коллекции рукописи и печати, которая принадлежит семье Григорянов, переселившаяся из Западной Армении, провинции Мшо, и поселившаяся в селе Вардаздор. Это собрание, состоящее примерно из пяти единиц которая включает: два рукописных Амулетов в виде свитка (16-17 вв.), одну античную Евангелию (1685-1686 г., Венеция), один печатный Шаракан (церковное песнопение, 1852 г., К. Полис), одно печатное Часословие (1872 г., К. Полис). Частная коллекция Григорянов, пройдя долгий путь нашла свое последнее пристанище в селе Вардаздор, Гегеркуникской области, РА. После окончания русско-турецкой войны (1828-1829 гг.) началось массовое переселение из Западной Армении в Восточную Армению (1829-1830-е гг.). В это же время предки Григоряна Невского так же вынуждены были стать переселенцами и поселились в селе Вардаздор перевезя с собой коллекцию.

Первоначальное количество единиц входящих в коллекцию было гораздо больше, которые, сгорели в результате пожара (1995 г.). Благодаря стараниям Григорянов (старшего брата Невского Григоряна, Паруйр Григоряна и его сына Валерия Григоряна) 1998 г. в примыкающей части дома была возведена купольная церковь «Св. Григора Нарекаци», более известная

жителям как «Григор Нарек», с целью сохранения и спасения коллекции от дальнейшей утраты. Выбор времени и места возведения церкви было не случайным. Это обусловлено тем, что Паруйр Григоряну во сне было видение, в котором было указано место возведения церкви (до построения церкви, коллекция хранилась на первом этаже дома, куда как поломники приходили верующие).

Частная коллекция Невского Григоряна (перечисленная выше) достойна изучения и публикации, поскольку выявляет образцы рукописных амулетов в виде свитков. Благодаря найденным подобным образцам печатных единиц армянское наследие пополняется и обогащается!

Satenik Grigoryan

The private manuscript and print collection of the Grigoryans

Conclusion

Key words and expressions: Vardadzor village, Western Armenia, Mush district, newly discovered, handwritten Amulets in scroll, old printed Gospel, prints, Hymnarium, Horologion.

The article presents the private manuscript and print collection belongs to the Grigoryan family which migrated from Mush district of Western Armenia and settled in Vardadzor village. This collection, consisting of about five units, includes: 2 manuscripts Amulets in scroll, (16-17th cc.), 1 old printed Gospel (1685-1686, Venice), 1 printed Hymnarium (1852, Constantinople), 1 printed Horologion (1872, Constantinople), which have been described in detail in the mentioned work.

The units in the Grigoryans' private collection found their final destination after a long journey in the village of Vardadzor, Gegharkunik state, RA. After the end of the Russian-Turkish war (1828-1829), mass migration from Western Armenia to Eastern Armenia began (1829-30s). At that time, Nevsky Grigoryan's ancestors also migrated and settled in the village of Vardadzor, bringing the collection with them.

The number of units initially included in the collection used to be larger, that, unfortunately, was burnt as a result of the fire in 1995, only this much was possible to save. In order to save the collection from further loss and keep it in better conditions, with the efforts of Nevsky Grigoryan's elder brother Paruyr Grigoryan and his son Valery Grigoryan (in 1998) they built in the adjacent part of the house church of S. Grigor Narekatsi, which is better known by the residents as "Grigor Narek". The time and location of the church construction is not accidental. Conditioned by the fundamental circumstance that Paruyr Grigorya had a dream in which the saint complained about keeping him in the attic (before

the construction of the church, the collection was located on the first floor of the house, where the believers came to take vows), then pointed to the place where the current church was built.

The units in the above-mentioned private collection of Nevsky Grigoryan deserved to be studied and published, since they reveal examples of handwritten Amulets, and thanks to them, the discovered similar printed units replenish and enrich the Armenian book art with several more.

Սաթենիկ Գրիգորյան – մշակութաբան, ձեռագրագետ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ձեռագրերի նկարագրություն, ուսումնասիրություն և հրատարակում: Ուսումնասիրության հիմնական թեման Մանվել վարդապետ Կյումուշխանեցու կենսագործունեությունն է: Նրա կատարած հայապահպան և մշակութաստեղծ աշխատանքի լուսաբանումն ու հանրահռչակումը: Հեղինակ է երեք գիտական հոդվածների:

saten.2012@mail.ru:

Сатеник Григорян – культуролог, рукописовед, младший научный сотрудник Матенадарана имени Месропа Маштоца. Научные интересы: описание рукописей, исследования и публикации. Основная тема исследования – жизненная деятельность архимандрита (преподобного) Манвел Кюмушханец. Освещение и популяризация армянской культуротворческой деятельности. Автор три научных статей.

saten.2012@mail.ru.

Satenik Grigoryan - culturologist, calligrapher, junior researcher of Matenadarana after Mesrop Mashtots. Scientific interests: description of manuscripts, studies and publications. Main topic of research - this is the life activity of Reverend Manvel Kyumushkhanets. Coverage and popularization of his work as an Armenian conservationist and cultural creator. Author of three scientific articles.

saten.2012@mail.ru.

Խմբագրություն է ուղարկվել 12.11.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.11.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.